ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.05.2017թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-ԳԲԽ-28/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ՍՑ-ԳԲԽ-28/17 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2017թ. թիվ 03/73-1/6785-17 և 21.04.2017թ. թիվ 03/73-1/6981-17 գրություններով ներկայացված «Ռաֆ Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04226927) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-28/17 բողոք), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), Երևանի քաղաքապետարանի 12.04.2017թ. թիվ 01/61-6447 և 12.04.2017թ. թիվ 01/61-6448 գրությունները և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.04.2017թ. թիվ 01/61-6447 և 12.04.2017թ. թիվ 01/61-6448 գրությունների հիման վրա, 19.04.2017թ. թիվ 03/73-1/6785-17 և 21.04.2017թ. թիվ 03/73-1/6981-17 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ռաֆ Շին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Ռաֆ Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Ռաֆ Շին» ՍՊԸ-ն՝ ՍՑ-ԳԲԽ-28/17 բողոքը քննող հանձնաժողովի 28.04.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ առարկել է ներկայացված տեղեկատվության դեմ և հայտնել, որ «Ռաֆ Շին» ՍՊԸ-ն հայտերը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում երեք տարիների համախառն եկամուտը պակաս չէ ներկայացված գնային առաջարկներից:

Ի հավաստումն վերոհիշյալ փաստի «Ռաֆ Շին» ՍՊԸ-ն 23.05.2017թ.-ին Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի հարկային տեսչության կողմից 22.05.2017թ.-ին տրամադրված գրությունը, համաձայն որի «Ռաֆ Շին» ՍՊԸ-ի 2015թ.-ի համախառն եկամուտը կազմում է ***7755422 ՀՀ դրամ***:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 12.04.2017թ. թիվ 01/61-6447 և 12.04.2017թ. թիվ 01/61-6448 գրություններով ներկայացրել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71» և «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/76» ծածկագրերով գնման ընթացակարգերի հրավերների անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-28/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2017թ. թիվ 03/73-1/6785-17 և 21.04.2017թ. թիվ 03/73-1/6981-17 գրություններով ներկայացված «Ռաֆ Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Ռաֆ Շին» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71» և «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/76» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգերին, համապատասխանաբար՝ 28.03.2017թ. և 03.04.2017թ.-ներին հայտեր է ներկայացրել, առաջարկելով հետևյալ գնային առաջարկները՝ ***6624038 ՀՀ դրամ և 3977352 ՀՀ դրամ*** համապատասխանաբար:

2. Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ

պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 04.04.2017թ. և 07.04.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Ռաֆ Շին» ՍՊԸ-ի հայտերը ներկայացնելու օրվա ***(28.03.2017թ. և 03.04.2017թ.)*** նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ***(2014թ. 0 ՀՀ դրամ, 2015թ. 2890995 ՀՀ դրամ, 2016թ. 0 ՀՀ դրամ)*** պակաս է ներկայացված գնային առաջարկից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2017թ նիստի N 4 և 10.04.2017թ. նիստի N 3 արձանագրությունների համաձայն՝ «Ռաֆ Շին» ՍՊԸ-ի հայտերը մերժել է:

5. «Ռաֆ Շին» ՍՊԸ-ն 23.05.2017թ.-ին Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի հարկային տեսչության կողմից 22.05.2017թ.-ին տրամադրված գրությունը, համաձայն որի «Ռաֆ Շին» ՍՊԸ-ի 2015թ.-ի համախառն եկամուտը կազմում է ***7755422 ՀՀ դրամ***:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 67-րդ կետի համաձայն «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

«Ռաֆ Շին» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71» և «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/76» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգերին, համապատասխանաբար՝ 28.03.2017թ. և 03.04.2017թ.-ներին հայտեր է ներկայացրել:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 04.04.2017թ. և 07.04.2017թ. տրամադրել է եզրակացություն, համաձայն որի «Ռաֆ Շին» ՍՊԸ-ն հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ***(28.03.2017թ. և 03.04.2017թ.)*** երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ***(2014թ. 0 ՀՀ դրամ, 2015թ. 2890995 ՀՀ դրամ, 2016թ. 0 ՀՀ դրամ)*** պակաս է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից ***(6624038 ՀՀ դրամ)*** և «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/76» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից ***(3977352 ՀՀ դրամ):***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2017թ նիստի N 4 և 10.04.2017թ. նիստի N 3 արձանագրությունների համաձայն՝ «Ռաֆ Շին» ՍՊԸ-ի հայտերը մերժել է:

«Ռաֆ Շին» ՍՊԸ-ն 23.05.2017թ.-ին Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի հարկային տեսչության կողմից 22.05.2017թ.-ին տրամադրված գրությունը, համաձայն որի «Ռաֆ Շին» ՍՊԸ-ի 2015թ.-ի համախառն եկամուտը կազմում է ***7755422 ՀՀ դրամ***:

Այսպիսով, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Արտաշատի տարածքային հարկային տեսչության կողմից տրամադրած 22.05.2017թ. գրության պարզ է դառնում, որ «Ռաֆ Շին» ՍՊԸ-ն ***28.03.2017թ. և 03.04.2017թ***. հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է՝ ***2014թ. 0 ՀՀ դրամ, 2015թ. 7755422 ՀՀ դրամ, 2016թ. 0 ՀՀ դրամ***, որը պակաս չէ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից ***(6624038 ՀՀ դրամ)*** և «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/76» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկից ***(3977352 ՀՀ դրամ):***

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ԿԱ ՊԵԿ-ի Արտաշատի տարածքային հարկային տեսչության կողմից տրամադրած 22.05.2017թ. գրությունը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ռաֆ Շին» ՍՊԸ-ն 28.03.2017թ. և 03.04.2017թ.-ներին հայտեր ներկայացնելով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/71» և «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/76» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգերին ներկայացրած հավելված 3.4-ով, թույլ չի տվել Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով, 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 19.04.2017թ. թիվ 03/73-1/6785-17 և 21.04.2017թ. թիվ 03/73-1/6981-17 գրություններով ներկայացված «Ռաֆ Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04226927) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել՝ «Ռաֆ Շին» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

անդամ՝ **Հարություն Մարտիրոսյան**

անդամ՝ **Հայկ Կոշեցյան**